ՀՈՒՇԱԳԻՐ
«ՇԻՐԱԿԻ Մ.ՆԱԼԲԱՆԴՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄԻ
ԵՎ
ՀՀ ԿԳՄՍ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ «ՇԻՐԱԿԻ ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆԱՅԻՆ ՊԵՏԱԿԱՆ ՔՈԼԵՋ» ՊՈԱԿ-Ի
ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

ք. Գյումրի 12 մայիսի, 2023թ.

«Շիրակի Մ.Նալբանդյանի անվան պետական համալսարան» հիմնադրամն /այսուհետ՝ Համալսարան/ ի դեմս համալսարանի ռեկտոր Երվանդ Սերոբյանի, մի կողմից, և «Շիրակի տարածաշրջանային պետական քոլեջ» ՊՈԱԿ-ը /այսուհետ՝ Քոլեջ/ ի դեմս քոլեջի տնօրեն Ամալյա Ադամյանի, մյուս կողմից (այսուհետ՝ Կողմեր), ղեկավարվելով «Կրթության մասին» ՀՀ օրենքի 23-րդ հոդվածի 4-րդ կետով, ՀՀ Կառավարության որոշմամբ հաստատված «Միջին մասնագիտական ուսումնական հաստատությունների բարձր առաջադիմություն ցուցաբերած շրջանավարտների՝ բարձրագույն ուսումնական հաստատություններում համապատասխան մասնագիտությամբ կրթությունը շարունակելու մասին կարգով», կնքեցին սույն հուշագիրը (այսուհետ՝ Հուշագիր) հետևյալի մասին:

1. ՀՈՒՇԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

Սույն Հուշագրով կարգավորվում են Քոլեջի բարձր առաջադիմություն ցուցաբերած շրջանավարտների ուսումը Համալսարանում համապատասխան մասնագիտությամբ շարունակելու հետ կապված հարաբերությունները: Ուսումն առկա և հեռակա համակարգերում շարունակելու նպատակով սույն Հուշագրի անբաժանելի մաս համարվող հավելվածում (այսուհետ՝ Հավելված) սահմանվում են մասնագիտությունները՝ համապատասխան մոդուլներով:

2. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1.Համալսարանը պարտավորվում է՝

2.1.1. 2023-2024 ուսումնական տարվանից իրականացնել Քոլեջի բարձր առաջադիմություն ցուցաբերած (միայն «Լավ» և «Գերազանց» գնահատականներ ունեցող) շրջանավարտների ուսուցումը Համալսարանում՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

2.1.2. Մինչև 2014թվականը Քոլեջ ընդունված հավակնորդների դեպքում ուսուցումը կազմակերպել Համալսարանի առկա կամ հեռակա ուսուցմամբ երկրորդ կուրսում, եթե ուսումնառած և նախընտրած մասնագիտության ուսումնական պլաններով

նախատեսված առարկաների/մոդուլների առարկայական տարբերությունների քանակը չի գերազանցում 8-ը, իսկ հետագա ժամանակահատվածում ընդունված հավակնորդների դեպքում՝

միայն հեռակա ուսուցմամբ երկրորդ կուրսում, եթե ուսումնառած և նախընտրած մասնագիտության ուսումնական պլանով նախատեսված առարկաների/մոդուլների առարկայական տարբերությունների քանակը չի գերազանցում 8-ը:

2.1.3.Համագործակցելով Քոլեջի հետ՝ ուսումնական պլանների և առարկայական/մոդուլային ծրագրերի փոխհամաձայնեցման և բարելավման աշխատանքներում:

2.1.4. Անհաժեշտության դեպքում Քոլեջին ցուցաբերել համապատասխան մեթոդական և մասնագիտական օգնություն՝ ուսանողների ուսման շարունակման գործընթացն ավելի արդյունավետ կազմակերպելու նպատակով:

2.2. Քոլեջը պարտավորվում է՝

2.2.1.Հստակորեն պահպանել Համալսարանում ուսումը շարունակելու ենթակա շրջանավարտների ընտրության կարգը:

2.2.2. Վերանայել և Համալսարանի ուսումնական պլանների հետ հնարավորինս համապատասխանեցնել Քոլեջի ուսումնական պլանները և ծրագրերը՝ Համալսարանում շարունակվող մասնագիտությունների գծով:

2.2.3. Քոլեջի շրջանավարտների պետական որակավորման քննությունների հանձնաժողովների աշխատանքներին մասնակից դարձնել Համալսարանի համապատասխան մասնագետներին:

3. ՀՈՒՇԱԳՐԻ ՎԱՂԱԺԱՄԿԵՏ ԼՈՒԾԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ

Սույն Հուշագիրը ենթակա է վաղաժամկետ լուծման Կողմերից յուրաքանչյուրի կողմից, առնվազն մեկ ամիս առաջ մյուս Կողմին գրավոր ծանուցելու դեպքում:

4. ՀՈՒՇԱԳՐԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ԺԱՄԿԵՏԸ

4.1. Սույն Հուշագիրը ուժի մեջ է մտնում ստորագրման պահից և գործում է 5 (հինգ) տարի ժամկետով՝ բացառությամբ սույն հուշագրի 3-րդ կետի:

4.2. Սույն Հուշագրում ցանկացած փոփոխություն և լրացում վավեր է այն պայմանով, եթե դրանք կատարվում են գրավոր և ստորագրված՝ Կողմերի լիազոր ներկայացուցիչների կողմից:

4.3. Սույն Հուշագիրը կնքված է երկու օրինակից, որոնք ունեն հավասար իրավաբանական ուժ : Յուրաքանչյուր կողմին տրվում է մեկ օրինակ:

5. ԼՐԱՑՈՒՑԻՉ ՊԱՅՄԱՆՆԵՐ

5.1. Սույն Հուշագիրը Կողմերի համար որևէ լրացուցիչ ֆինանսական պարտավորություն չի առաջացնում:

5.2. Համալսարանի անվճար ուսուցման համակարգ են տեղափոխվում քոլեջի հետևյալ տարակարգերի ուսանողները՝

5.2.1. Առանց ծնողական խնամքի մնացած և նրանց թվին պատկանող անձինք՝ համաձայն «Առանց ծնողական խնամքի մնացած երեխաների սոցիալական պաշտպանության մասին» ՀՀ օրենքի:

5.2.2. 1-ին և 2-րդ խմբերի հաշմանդամները և հաշմանդամ երեխայի կարգավիճակ ունեցող անձինք՝ համաձայն «ՀՀ հաշմանդամների սոցիալական պաշտպանության մասին» ՀՀ օրենքի, որոնց համար տվյալ մասնագիտությամբ սովորելը հակացուցված չէ:

5.2.3. Զոհված զինծառայողների երեխաները, պարտադիր ժամկետային զինվորական ծառայության ընթացքում հաշմանդամ դարձած անձինք՝ համաձայն «Զինծառայողների
և նրանց ընտանիքների անդամների սոցիալական ապահովության մասին» ՀՀ օրենքի:

ԿՈՂՄԵՐԻ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ

ՀԱՄԱԼՍԱՐԱՆ	ՔՈԼԵՋ
«Շիրակի Մ.Նալբանդյանի անվան պետական համալսարան» հիմնադրամ	«Շիրակի տարածաշրջանային պետական քոլեջ» ՊՈԱԿ
Իրավ. հասցե՝ ք. Գյումրի Պ, Մնակի 4	Իրավ. հասցե՝ ք. Գյումրի, Մանուշյան 4
ՀՎՀՀ 05502348	թաղ. թիվ 30
«Հայէկոնոմբանկ» ԲԲԸ Շիրակի մ/ճ	ՀՎՀՀ 05500497
Հ/Հ 163528999994	Գյումրու գանձապետական բաժանմունք
	900218000777
Հեռ՝(+374 0312) 2 66 00	Հեռ. ՝(+374 0312) 3 12 98
E-mail: info@shsu.am	*E-mail:* shtpq20@mail.ru
ՇՊՀ ռեկտոր	Քոլեջի տնօրեն
Ե. Սերոբյան _____	Ա. Ադամյան _____